## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 9

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ ՝**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 4 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ .

1. Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2014թ-ի 1-ին եռամսյակի կատարողականի մասին :

2. Հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին :

3. Համայնքի սանիտարական մաքրման սխեմաները հաստատելու մասին :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 10

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՌԱՄՍԱ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԻ 2014Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2014թ-ի 1-ին եռամսյակի կատարողականի մասին գնահատել լավ և ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Բերդիկ համայնքի ավագանու

2014 թվականի հունիսի 18-ի թիվ 10 որոշման

# ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ*

2014թ-ի ապրիլի 7-ին Բերդիկ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում ՝ նախագահությամբ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանի , քարտուղարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ջ. Ղազարյանի: Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժամբուլատորիայի աշխատակիցները, դպրոցի տնօրենն ու մանկավարժական կոլեկտիվը ,համայնքի բնակիչները :

ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Բերդիկ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանի հաշվետվությունը ՝ 2014-ի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ :

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ ՝

Նշված ժամանակահատվածում Բերդիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 53 դիմում , ինչպես նաև բազմաթիվ բանավոր հարցումներ : Դրանք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել համապատասխան լուծումներ:
- Գյուղապետարանը բնակիչներին տվել է 49 տեղեկանք , ստացել է 58 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են ու սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:
- 2014թ-ի առաջին եռամսյակի ընթացքում կազմակերպվել են մատչելի գներով /ազոտական պարարտանյութ ՝ 1պարկ-6000 դրամ ,կալիումիական և ֆոսֆորական պարարտանյութեր ՝ 1 պարկ -7000-ական դրամ /պարարտանյութերի բաշխում համայնքի բնակչությանը : Համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ են իրականացվել, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները , կուտակված կենցաղային աղբը տեղափոխվել է Ուրց- Կոտայքում գտնվող աղբանոց: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման , հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:
- 2014թ-ի նշված ժամանակահատվածում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ – 622 900դրամ / 25 %/ ,

բ) գույքահարկ – 757 000 դրամ / 55 % / ,

գ) տեղական տուրք – 20 000դրամ /25% / ,

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա / նշվել է մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օրը , ապրիլի 7-ը ՝ մայրության և գեղեցկության օրը ,

բ/ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է ֆինանսական աջակցություն ՝ 160 000 /մեկ հարյուր վաթսուն հազար / դրամ ,

գ / հուղարկավորությունների համար հատկացվել է անհատույց դրամական աջակցություն ՝ 60 000 / վաթսուն հազար / դրամ ,

ե / կազմակերպվել է գրական-երաժշտական միջոցառում ՝ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի ծննդյան 90-ամյա տարելիցին՝ գյուղապետարանի գրադարանավարի և դպրոցի ակտիվ երեխաների ուժերով :Այն կրում էր <<Իմ բարի երազը ձեզ սիրելիներս>> խորագիրը :

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար ՝ Ջ. Ղազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, ,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 11

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հողի հարկի արտոնությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Բերդիկ համայնքի ներքոհիշյալ բնակիչների նկատմամբ կիրառել հողի հարկի արտոնություններ և նրանց նորատունկ այգիները հողի հարկից ազատել՝ համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Բերդիկ համայնքի ավագանու

2014 թվականի հունիսի 18-ի թիվ 11 որոշման

## ՑՈՒՑԱԿ

## *2014 թվականին հողի հարկի արտոնություններից օգտված բնակիչների*

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Նախկին հողատեսքը | Ներկա հողատեսքը | Հողատեսքի չափը /հա/ | Հարկից ազատման ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Իսախանյան Նունիկ | խաղող | խաղող | 0,13 | 2014-2018թթ |
| 2 | Խաչատրյան Անդրանիկ | խաղող | խաղող | 0,24 | 2014-2018թթ |
| 3 | Սողոմոնյան Վարդան | խաղող<br>խաղող | խաղող<br>խնձոր | 0,11<br>0,11 | 2014-2018թթ<br>2014-2019թթ |
| 4 | Թումանյան Սամվել | վարելահող | խնձոր | 0,15 | 2014-2019թթ |
| 5 | Կարապետյան Ազատ | վարելահող | դեղձ | 0,5 | 2014-2019թթ |
| 6 | Հովհաննիսյան Ծովիկ | վարելահող | խնձոր | 0,12 | 2014-2019թթ |
| 7 | Հովհաննիսյան Վազգանուշ | վարելահող | խնձոր | 0,19 | 2014-2019թթ |
| 8 | Թարվերդյան Գառնիկ | խաղող | խաղող | 0,16 | 2014-2018թթ |
| 9 | Թարվերդյան Կարեն | վարելահող | խաղող | 0,28 | 2014-2018թթ |
| 10 | Ոսկանյան Համիկ | խաղող | խնձոր | 0,13 | 2014-2019թթ |
| 11 | Ոսկանյան Սերժիկ | խաղող | խնձոր | 0,12 | 2014-2019թթ |
| 12 | Թասալյան Կարեն | վարելահող | խնձոր | 0,41 | 2014-2019թթ |
| 13 | Բալջյան Գեղամ | խաղող | դեղձ | 0,16 | 2014-2018թթ |
| 14 | Հովհաննիսյան Համլետ | վարելահող<br>վարելահող | խնձոր<br>դեղձ | 0,1<br>0,1 | 2014-2019թթ<br>2014-2018թթ |
| 15 | Խաչատրյան Հուսիկ | վարելահող | խաղող | 0,23 | 2014-2018թթ |
| 16 | Հովհաննիսյան Պարույր | ծիրան | խաղող | 0,12 | 2014-2018թթ |
| 17 | Վարդանյան Դավիթ | վարելահող | սալոր | 0,14 | 2014-2018թթ |

*ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ* *ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 12

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ `**

Հաստատել համայնքի սանիտարական մաքրման սխեման ` համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Բերդիկ համայնքի ավագանու

2014 թվականի հունիսի 18-ի թիվ 12 որոշման

## *Սխեմա*

## *Բերդիկ համայնքի սանիտարական մաքրման*

### *Հիմնական փարրերը*

1 . Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը – *ամսական 13 - 15 խորանարդ մետր* ,

2 . Սանիտարական մաքրման ենթակա տարածքները – *ընդգրկում է համայնքի տարածքն ամբողջությամբ* ,

3 . Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները – *ամսեկան 1 անգամ , հիմնական բնակավայրում ՝ շաբաթ և կիրակի օրերը* ,

4. Աղբի հավաքման , պահպանման ,փոխադրման , տեղադրման ,տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները – *իրականացվում է աղբահանող վարորդի և աղբավայրի միջոցով :*

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ